լու չէր հեռանայ: Նա անպատճառ մէկ ղալմաղալ պէտք է սարքեր: Այս պատճառով վերջին անկարգութիւնը մեզ երեւաց բոլորովին սովորական: Նա խիստ չար աղջիկ էր, բայց մենք ամէնքս սիրում էինք այդ կեանքով լի եւ միշտ ուրախ փոքրիկին: Իսկ Մարիամի հետ նրա ոխակալութիւնը ունէր իր պատմական պատճառները. չգիտեմ մի տարի առաջ, թէ երբ, մի անգամ Մարիամը նրան կոչել էր «բոշա». այդ վիրաւորանքը Մարօն երբեք չէր կարող մոռանալ, թեւ քրոջս խօսքը բոլորովին հեռու չէր ճշմարտութիւնից, որովհետեւ Մարոյի մէջ կար շատ ինչ բոշայական: Մարօն չէր կարող համբերել, երբ նրան յիշեցնում էին, թէ նրա երեսը սեւուկ գոյն ունի, թէ նրա մեծ, կրակոտ աչքերը «ֆալ բացողի» (կախարդի) աչքեր էին, նրա մանր գանգուրներով թուխ ծամերը միայն արաբները կարող էին ունենալ: Հարկաւոր չէր ուղղակի նկատողութիւնը, բաւական էր ասել, թէ Մարիամի երեսը ճերմակ է կամ նրա մազերը շէկ ոսկու գոյն ունէին, — այն ժամանակ Մարօն իրանը հասկանում էր: Նա մինչեւ անգամ նախանձւում էր, որ Մարիամը միեւնոյն անունն է կրում, ինչ որ ինքն ունէր, եւ այս պատճառով ամենեւին չէր բարկանում, երբ նրան կրճատած կերպով Մարօ էին կոչում. դրանով գոնէ իր անունը զանազանւում էր:

Ինձ հետ Մարոյի յարաբերութիւնները նոյնպէս բարեկամական չէին. երբ ես բարկացնում էի, նա պատրաստ էր պատառոտել ինձ, բայց զգալով իր ուժի անհաւասարութիւնը, միշտ սպառնում էր, թէ «գիշերը, իմ քնած ժամանակը, նա կը գայ եւ կխեղդէ ինձէ: Մարօն հաշտ էր միայն Մագթաղի հետ, որովհետեւ չափազանց փափուկ բնաւորութիւն ունեցող Մագթաղը թեքւում էր նրա առջեւ եւ համարեա բոլորովին ենթարկուած էր նրա ազդեցութեանը: Այդ պատճառով Մագթաղի նոյնպէս ճերմակ երեսը եւ շէկ մազերը չէին բարկացնում նրան եւ չէին յիշեցնում, թէ ինքը բոշայի դէմք ունի:

Մարոյի այն գիշեր բերած կապոցը այնպիսի սովորական բան էր, որ մենք առանց բաց անելու, գիտէինք նրա միջում ինչ կար: Դա որսի խորոված միս էր հացի հետ, որ երբեմն ուղարկում էր նրա հայրը, չնայելով, որ ինքն էլ ոչ սակաւ աղքատութեան մէջ էր ապրում: Երբ Մարիամին հրաւիրեցին ուտելու, նա հրաժարուեցաւ, ասելով, թէ ինքը քաղցած կը մեռնի եւ այն «սեւ սատանայիէ բերած ողորմութեանը չի մօտենայ: Բայց մայրս միշտ գոհութեամբ էր ընդունում բարերար ձեռքի օժանդակութիւնը այն մարդից, որի հետ ամենեւին ծանօթութիւն չունէր, որը մի անգամ եւս ոտքը ներս դրած չէր մեր շեմքից, թեւ մեր ամենամօտ դրացին էր: Միայն Մարօն, որ յաճախ գտնւում էր մեր խրճիթում, պատմել էր իր հօրը մեր թշուառ դրութիւնը, եւ նա